ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 248 ԳԻՆ 30 ՓԱՐԱ. 1877 ԱՊՐԻԼ 16 ՇԱԲԱԹ

ԹԱՏՐՈՆ

Թատրոնը կը հրատարակվի Չորեքշաբթի և Շաբաթ օրերը։

Տարեկան բաժանորդագին կ՚ընդունի Պօլսոյ համար չորս ֆունտ գաւառաց համար հինգ արծաթ մէճիտ կանխիկ։

Բաժանորդագրութեան տեղն է Ս. Ղ. Եաղմաճեան դրատունը Եէնի Ճամի Զիլինկիրլէր համարակի Թիւ 2։

Ղրկված ձեռագիրները ետ չեն տրվիր։

Լրագրոյս վերաբերեալ գրութիւնները պիտի ուղղել աւ Յ. Յ. Պարոնեան Մեծ Նոր խան վերի յարկ դռնաձիջ Թիւ 10½ լրագրոյս տպարանը։

Լրագրոյս խմբագրին հետ տեսնվիլ փափաքողը չորեքշաբթի և շաբաթ օրերը միայն կրնայ գտնել պինք լրագրոյս տպարանը։

Ձանուս ծախքը չվճարված նամակ չընդունվիր։

ԿԱՄԱԹ

— Այդդ ըլյա Խիկար։

— Շնորհակալ եմ, ինչ կայ։

— Ջաւեշական թերթերը բոլորովին պիտի խափանեն եղեր։

— Ո՞վ ըսաւ։

— Պետական խորհուրդը։

— Երեսփոխանական ժողովը ընդունած է։

— Չէ ընդունած, այդ խաոութիւնը քիչ մը պիտի թեթևցնեն եղեր։

— Պիտի թեթևցնե՞ մի. . . ըսել է որ չպիտի խափանեն, այլ երկու ամիսը անդամ մը պիտի դոցեն։

——

Հակառակ Նիկոլաս մարդարէի դուշակութեանց անտրամաբանական պատերազմը սկսաւ։

Մայրաքաղաքիս լրագիրներէն մէկ քանին առջի օրը լուր տուին թէ մեր զրահաւորները Բօլթին ումրակոծեր ու բոցերու մէջ ձդեր են ղայն։

Ցիշեցալ լրագիրները մինչև այս ժամուս այս կրակին մարած ըլլալուն վրայ լուր մը հրատարակած չըլլալով՝ շատ հետանական է որ կրակը ամենայն սաստկութեամբ կը լափէ կոր այն կողմերը։

Պապը Սէրասքէրլիի դռնէն նշան մը չտեսնվեցաւ այս կրակին համար, վերոյիշեալ լրագիրները կամ Ղալաթա Խոնէնէն տեսած ըլլալու են ղայն կամ ժողովրդէն ստակ յափշտակելու համար ասանկ լուր մը ուտած ըլլալու են։

Ասոնցմէ ո՛րն ալ ըլլայ, ես մինչև որ Պապը Սէրասքէրլիէն նշան մը չտեսնեմ՝ չեմ հաւատար։

——

Անդղիա վարագուրին ետևը պահուըտած իր կարդին կսպասէ կոր. յուշարարը նշան տալուն պէս տեսարան պիտի գայ։

Հրամանը տրված է բոլոր զինուորական պաշտօնէից որ իրենց դունդերուն գլուխը գտնըվին։

Անդղիական լրագիրք կը պօռան թէ Ռուսիոյ այս բռնած ընթացքը ուղղակի Անդղիոյ շահուն դէմ է։

Եւ որովհետև Անդղիա պարտաւոր է իր շահերը պաշտպանել, և որովհետև Անդղիոյ շահուց ջնաս կայ եղեր, ապա ուրեմն Անդղիա պարտաւոր է սուրը պատեհանէն քաշել և պատերազմի Նաֆերէեմը լլնալ։

——

Վոէնէն նայելով Ռուսիա չատ անգամ Պուլղարները Բիւրակի կամ Չերքէզի կրծտա-

ըանք մտցնելով՝ անոնց ձեռքովը հարստահարութիւն ընել կուտայ եղեր։

Զըլլայ որ Չէյթունի քայմաքամն ալ Պուլղար մը ըլլայ։ Ի՞նչպես հասկնալու է որ վանը կրակին տուողները, կարսի եկեղեցին կողոպտողները Պուլղար չէին։

Չեն բռնըվիր կոր Թշուառականները որ հասկնայինք։

——

— Կիրակոս աղա, իմացա՞ր, պատերազմի վիճակ պիտի հրատարակվի եղեր։

— Ի՞նչ ընեմ։

— Բոլոր խանութները իրիկուան ժամը տասնին պիտի դոցվին եղեր։

— Ես արդէն երեկուընէ բոլորովին դոցեցի խանութս։

——

Ռուսմանիոյ իշխանին հետը ա՛լ չխօրտթիվը։

Ռուսիոյ կայսրը Թէոտոր տիւզուսը տալ խոստացեր է իրեն։

Իշխանին սիրտը դողի մէջ է հիմայ. ասմեն կէս ժամուն հեռագիր կը զրկեն եղեր կայսեր ըսելով Թէ, խոստացածդ տո՛ւր։

— Համբերէ աղաս, կը պատասխանէ եղեր կայսրը, սա Քրիստոնէից վիճակը բարւոքեմ, վերջն ալ քու վիճակդ պիտի բարեկարգեմ։

Ըսա մեզ Պիզմարք ըսած ըլլալու է կօրչաքօֆին որ, Ռուսմանիա պիտի մնանք, սա աղան պուշ մի հանեք. բան մը տուէ՛ք, հուշը կերթայ, կօրչաքօֆն ալ պատասխանած ըլլալու է.

— Ան տեղուանքը դիտեմնք, անիկայ Թո՛ղ մեր խօսքը մոխկ ընէ, մենք անոր խոռոչ կընանք։

Եւ այս պատասխանին վրայ Հօհենձօլէրնը իր դռները բանալով գեանէն Թէմենեան մը ընելով ներս հրամցուց Ռուսիան։

Ես հիմայ իշխանին տեղ ըլլամ նէ՝ դռները կը դոցեմ և մինչև որ Թէոտոր սիրտը չառնեմ Թող չեմ տար որ իր զօրքերը դուրս ելնեն։

——

Երկու մուրացկան իրարու հետ.

— Կարապետ աղբար, ինչո՞ւ ձեռքերդ բացեր ու խելագուկ նստեր ես հոս։

— Ի՞նչ ընեմ, Ղազար աղբար, երիկուընը տղաքը հաց կուզեն, միս կուզեն, մարուլ կուզեն, գինի կուզեն, ձուկ կուզեն։

— Կամաց խոսէ՛, մարդ կուգայ կոր։

— Մարդ մի կուգայ կոր ըսիր. . . (լալով) մեռնելուդ հոգուն համար, հինգ բարա տուր, Աստուած գործդ յաջողէ, երկու օրէ ի վեր բան մը կերած չեմ, անօթի եմ։

— Գնաց։

— Քօնսօլիսէն խապար մը ունի՞ս, եղեր է կըսեն կոր։

— Քօնսօլիսը ձդէ՛ դուն հիմայ, ես քեղի խայըրը հավասիս մը բերի անոր նայինք։

— Ի՞նչ կայ։

— Լիվէնսիմ, պլեթիւն մուրացկանները տերութենէն առնելիք ունին եղեր տէ, խապար չունիս։

— Ի՞նչ կըսես ծօ։

— Ջիմացա՞ր. անցեալ շաբթու Մէճլիսի ումումիկին մէջ ըէյիս Վէֆիք բաշան ըսեր է թէ հինգ հարիւր տարի կայ որ տերութիւնը աղքատներու համար մեծ մէպլաղ մը տուեր է, աս մէպլաղին ֆայիզովը էֆէնտիմ՛ չէ քի միայն Պօլսոյ աղքատները՝ այլ անոր հինգ հարիւր խաթը աղքատներ ալ դանըվին նէ՝ կէյֆնմիզ կըլլան եղեր։

— Ինչո՞ւ ուրեմն մեր ֆայիղները չեն տար եղեր։

— Առանկ նստելով դործ չի քալեր, պլեթիւն մուրացկանները մէկ ըլլալու ենք, քեհեանիս առջևէն մենք եսևէն խարիճկիսկի առջև չարվելու ենք, արզըհալ մը տալու ենք և հաշիւները նայելու ենք։

— Անանկ է եա՛, նայինք որի տրվեր է այդ ֆայիղները։

— Ի՞նչ կըսես, աղբար, ֆայիղները կառնենք, եան կուգանք, զաթը այս տարի տունէն գլուխս կը տանին կոր քի Պեօյիւք Տէրէ երթանք։ Աս ի՞նչ անիրաւութիւն է, մեր ֆայիղներուն վրայ նստեր են։

— Հիմայ բանած ֆայիղները առնելնէս եաքը, անան ալ չի՞նք կրնար ուղել։

— Իրաւունքնիս չէ՞ մի. կուղենք, կառնենք պանքայի մը կուտանք, ֆայիզը անկից կառնենք։

— Պօլսոյ աղքատներուն հինգ խաթը ըլլայ նէ՝ կէյֆնտիրմիշ կընէ եղեր հէ՛։

— Ձանըմ Ա.Ֆէտա Վէֆիք բաշան սուտ չպիտի խօսի եա՛։

— Հարցնելուս պէպէզը սա՛ է քի, սանի երթամ փինթս ու տղուս խանութները գոցել տամ տէ մեր քեհեային տանիմ՛, մուսլացկան գրել տամ։

— Հէմակուընէ Թանթանայի մի՛ տար, ղերէ այս անգամ գրվելիքներուն մէջը հարուստներ ալ կան, մենք անոնց հետ գլուխ չենք կըրնար եղնել վերջը բայը կը մնանք։

— Մնաք բարով, ընկերներուդ խմացուր սա լուրը։

— Դուն ալ արզըհալին ավետատե՛։

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պիրմանիոյ Թագաւորը յանկարծադէպ ոտկի խաչ մը շնորհեր է Մասիսի խմբագրին։

Կը շնորհաւորենք մեր պաշտօնակիցը։

Մեր պաշտօնակիցը յիշեալ խաչը ընդունած վայրկենին շատ խնդա՞ց արդեօք։ Չենք կարծեր, այլ եզրասի աքաղաղին պէս խաչը մէկդի դնելով բսաւ. «Ես այս ադամանդը ի՞նչ ընեմ, դարին հասիկ մը ինծի համար աւելի արժէք էր։»

ՓՕՍՏԱՑՈՒԹՓԻՆ

ԸՆԴ ԿՆՆԴԱՆԻՍ

(Շարունակութիւն էջ 247)

— Պ. եղն, կը տեսանենք թէ ինչպէս օձը, առիւծը, արծիւը և զանազան ուրիշ կենդանիք՝ նոյնպէս ալ ձեր ընտանիքը՝ (այսինքն ցուլ, եղն, ջոխ) մեծ դեր մը կը խաղան հին ազգաց դիցարանութեանց, առակախօսութեանց, և այլ և այլ կրօնքի պատմութեանց և սրարողութեանց մէջ. ուստի նթէ չեք ըզլանար՝ մեկնեցէք ձեր խորհրդական պատկերներու նշանակութիւնները։

— Ծէր իմ, մեր պատկերներն՝ որ երբեմն ցլոյ, երբեմն եղնի, երբեմն ոջխու, և երբեմն ալ կովու ձևով կը տեսնէք ամեն տեղ շատ խորին և փիլիսոփայական նշանակութիւններ ունին, և որոնց ուսանդութիւններն հին ժամանակներէ մինչև ցարդ մեացեր են։

Նախ և առաջ, եղնը կը տեսնէք եգիպտոս մէջ «Ֆերովրէ» անուամբ, որ Աստուած Ադամ և Եւան դրախտէն հանած [ժամանակը դրախտին արևելեան կողմը հրեղէն սուրերով շինուած Ֆերովրէներն դրաւ իբրև պահապան. (Ֆերովրէ անունը՝ երբայեցւոց «խերուբ» բառէն եկած է, որ «եղն» ըսել է.) ուստի եղնը՝ այլաբանական երկու գլխաւոր նշանակութիւն ունի հոս։ Մէկը՝ կը նշանակէ նիւթ կամ նիւթականութիւն, և ձեռքի հրեղէն սուրերնին ալ հոգի կամ հոգևորութիւն, այսինքն նմանելու համար թէ՝ մարդկային բնութիւնը հոգևոր պետոյից ծառայութենէ խորչելով, նիւթական ամարդի դպատուհներն ու հաճոյքները յագեցնելու են. մահկայ է, որոնց հետևանքը՝ աղականութիւն, մշանջենական կեանքէ զրկում, և մահ է։ Իսկ խորհրդական պատկերն է, որով կը յայտնէ թէ՝ մարդկի աչխատութեամբ միայն կըրնան երկնից վիճակը բարւոքել և թերութենից քաւութիւն առանալ։

Ականջին չինած ոսկիե որթը կը նշանակէ նիւթ՝ այսինքն նիւթապաշտութիւն. այն իմաստը ներկայացնելու համար թէ, երբ Մովսես Սինայի լերան վրայ երթա Աստուծմէ Տասնաբանեայ պատուիրանքները ընդունելու, երբայեցիք նիւթապաշտութեան մէջ լինան ու ուզեցին Աստուածպաշտութիւնը թողլով՝ կռապաշտութեան հետևիլ, որուն համար Մովսես խիստ զայրացաւ իւր վերադարձին, և չդիմելով այդ մեղը ազանդը, վերսին մտցուց անոնց մէջ հոգևորպաշտութիւնը։

Հին Եգիպտացւոց մէջ Աբիս, Մնեվիս, և Օնուփիս անուն եղներու ազանդներ կային և սոյն կենդանիները Օզիրիս անուն աստուծոյ մարմնաւորութիւնը կը սեպէին աչխարհիս վրայ։ Արևը՝ Օզիրիսի անձնաւորութիւնն էր, լուսինն ալ Իղիսի. մեկը կընդհակայացնէր ըստ, և մեռաը խաւարը. և աստղմով, բնական օրինաց երկու անբաժանելի իրարու ներհակ դաղանի զօրութիւնները կընկարագրէին, իսկ ճշնը՝ դարձեալ նիւթականութեան պատկերն էր։ Վերջապէս բոլոր այս խորհրդական ձևերու իմաստն ուրիշ բան չէր՝ այլ միայն սա դատանութիւնը յայտնել թէ՝ Աստուած ամենակարող, ստեղծող և կենսատու լոյս մ'է, որուն վրայ դաղաբար մը ստանալու համար արևը կրնանք նկատել՝ իբրև իր ամենազօրեղ ոսկի մեկ պատկերը. թէ՝ սիեղերաց ներդաշնակութիւնը երկու դաղանի սրբազան զօրութիւններէ կը դոյանան, իրրև լոյս և խաւար. թէ Աստուած կը մարմնանայ աչխարհիս վրայ իրրև զօրութեան հետ միացած նիւթ մը, որուն համանիշ պատկերն է եղնը։

Երբեմն ալ ցուլն ու եղնը թէ եգիպտոսի մէջ և թէ այլուր՝ աչխատութեան պատկերն էր, իմաստասիրելու համար թէ՝ աչխատանքով միայն ամեն բան կը մշակուի, և առանց աչխատութեան մարդս չի կրնար երջանիկ կեանք վայելել։

Դարձեալ եգիպտոսի և Ասորեստանի Սալմոքսներն որ չորս կենդանեաց ձևէ միացած արձաններ էին, կընշանակէին տարերաց չորս երևոյթական կերպարանքը, սրարչութեան չորս չրջանը, մարդկային կենաց և ժամանակաց չորս եղանակը, սկզբնական չորս դաղանի նշանագիրներուն իմաստութիւնը. ևն. ևն։ Մարդու դլուխ և կուրծք, առիւծի ճիրանք, արծուի թևեր, և ցլոյ կուշտերն ունեին այդ Սալմոքսները։ Ալքիմիայի մէջ ալ այս չորս կենդանիները՝ չորս հանքերու, չորս կաղերու և երկրին ալ ուրիշ դաղանի անուններով կընկերայացվէին։ Առիւծը՝ հանգերուն և կաղերուն մէջ կը հանդատատեցնէր ծծումբի և թթուածնին. Արծիւը՝ բորակածնին և ածխածնին, մարդը՝ ազկի և ջրածնին, և ցուլն ալ՝ աղի և ածխի, որք ամէնքն ալ՝ Հուր. Օդ. Ջուր, և Երկիր կոչուեցան, բայց ո՛չ թէ ատոնք իրր զուտ և պարզ մարմին ըլլալնուն համար, որպէս կը կարծեն խեղ մը դիտնականք և 61 ի կը հաղնեն, այլ ատոնցմով հին փիլիսոփաները տարբերաց չորս երևոյթական կերպարանքը կիմանային։ Այս կետը քիչ մ'ընդարձակ մեկնութեան կարօտ ըլլալուն պատճառաւ, նթէ չեք ձանձրանար, Ծէր իմ, ձեզի բացատրեմ։

— Հրամմեցէք, պ. եղն, չատ շնորհակալ կըլլամ։ Ես այս դիտութենէդ խիստ հետաքրքրեր եմ։

— Ի սկզբանէ սիեղերք և ամենայն իրք վիհ և խաւար՝ և անկերպարան վիճակի մէջ էր. երբ Աստուած՝ արարչութեան առջի չբրջանին մէջ ստեղծեց լոյսը. այսինքն՝ ըստ հին և պաղանի փիլիսոփայութենէ՝ առաջին և հրեղէն տարրը որ ունի երեք դլխաւոր յատկութիւն « լոյս, Ջերմութիւն և չարժում։ Ցետոյ տարրը արարչութեան երկրորդ չրջանին մէջ իւր կեդրոնէն բոլոր չրջապատը սքանչելով՝ սիեղերաց անհունութեան մէջ առին կողմ տարածուեցաւ, և սկսաւ խաւարը լուսաւորելով ցրտութիւնը ջերմացնելով ու բուսնեցնելով և հանդարտութիւնը չարժելով սիեղերական հաւասարակշռութիւնը կազմել, և եղև երկինք, այսինքն՝ եթեր, նուրբ օդ, կամ օդեղէն տարր։ Ջերմութիւնը՝ ցերտութեան հետ, լոյսը՝ խաւարի հետ, և հանդարտութիւնը՝ չարժման հետ միութիւն դաշնակցած ստեղծին բնականաբար դոյացան ջուրք, այսինքն չորեղէն և ամպային երկրքի,

և եղև երրորդ չրջան արարչութեան և երրորդ տարր ջրեղէն։ Ցետոյ այս տարրը լուսեղէն կեդրոնէն հեռանալով և զանազան ցեղ նիւթոց սկզբնական հիւլէներու հետ կապակցելով սկսաւ թանձրանալ և երկրագունտես րու ձևերը առնելով լուսեղէն կեդրոններու բուլորաքը չրջիլ. և ահա այսպէս եղև արարչագործութեան չորրորդ չրջանի մէջ երկիր, կամ չորրորդ տարր երկրեղէն։ Ուստի այս դաստակարգութեամբ հեռաշեռաէ կատեդծուին բոյսեր, կենդանիներ, և վերջն ալ մարդկայինն էակներ, որք երկրիս վրայ Աստուծոյ կենդանի պատկերն են՝ երբ չեն ուղեր ատտաչնորհէ նահիլ։

(Շարունակելի) Սալնէս

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՆԻՄԱՆԱԼԻ ԳՐՈՑ

1. Ցորմէհետե Դևկալիոն գնդեցաւ քարիներու յուշարձան, ուստի վեր ելլին մարդիկ ադգ անհնարին և դժնդակ.

Մշակ. Վիրգ.

Այս կը նշանակէ, մտերիս երեսփոխանական ընտրութեան պետի ձեռնարկուի զանազան թաղերու մէջ. և որպէս զի ձախաւերյաց ամբոխները բաչխանան և աչխարհ լինայ իրենցմով, ի՛նչ ըլլայ նէ ըլլայ, ձախի նշան կրողին ականջին քաշեն ու ուռկանի մէջ պիտի ձգեն, ուստի վեր պիտի ելնէ։

Մբոխը ազային ժկիը որ՝ ձեռք վերցնելուն կերպն անդամ չդիտեր.

Ոը՝ խօսիմ ըսէ նէ կարծես թէ չըխօսիր.

Ոը՝ ինչպէս խաբած են, վաճառական չէ

Ոը՝ ձեռքը բաց բան մը ծալով նա փուե ըսես նէ, ետքն կը հասկնայ

Ոը՝ .... որ .... որ .... ո՛ր մեկին ըսեմ։

Այս մեկնութիւնը խակ և խակ Յովհաննու մարգարէին ծոցէն գանուած է. բայց նթէ խակ և խակութեանը չհատացող կա՛յ նէ խնկուհին թող հարցունէ։

———

2. Այս ի՞նչ կորուստ ի՞նչ մեծ ցաւ
Բարթալօմիս կոճակը
Կոճկելընկքէն փրթեցաւ
Գնաց մնաւ ո՛ր ծակը...
Գ. Ռշտունի

Այս կը նշանակէ. այս օրերս պատուի շեշտ ունեցող մարդուն մեկը իր մեջը փառաչ ու պարապ. բայց վրան ոսկեզօծեալ պատիւը բերնէն ձգելով պիտի կորնչցունէ, և ամիսներով ցաւելէն. կսկծալէն, և պօռալով կանչելով հոկորդը պատռելէն վերջը իր պատիւը պիտի դանայ ժանգոտած։

Եւ քանի որ չունի փայլեցնելու համար, այնքան ևս պիտի սևնայ ու հոտը պիտի հանէ.. ո՛հ։

———

3. Եւ դնային և ելանէին և իջանէին և դործս խառատային և կուտս բաժանէին և խահուէի ծախսէին և բաղմութիւն ցնդէ փընթիս դուսարէին և ատա մաղպաթայս հնարէին զանարդարն արդարացնել կամէին և բաղում քրանիքս թափէին. և ահա ի հարատևոյ չնչաց հոդի և պաղեցուց զբրանիքս ատցա և ի դողդոջալոյ զարնան և աւելն և խմայան դի զաւելնայն զոր ինչ արարեալ էին իրրև զերազ եկեալ անցեալ էին և աչխատանք հանդչի ի բ'եանց ձեռայն ի չանգիմանութիւն և ի խոչտանակութիւն իւրեանց։

Տարեվերջին ես ինձ գտնում էի Ղրիմում, Ալուշտայի մոտ գտնվող Ուտյուզ կալվածքում, որտեղ ամառն անցկացնում էր մեր ընտանիքը։ Ես ուզում էի ինձ համար ստեղծել հանգիստ, որ կարողանայի ավարտել իմ նոր վեպը։ Ուզում էի ինձ համար ստեղծել հանգիստ, որ կարողանայի ավարտել իմ նոր վեպը։ Ուզում էի ինձ համար ստեղծել հանգիստ, որ կարողանայի ավարտել իմ նոր վեպը։

Ուտյուզում ես ապրում էի ինչպես ճգնավոր։ Ես ոչ ոքի չէի տեսնում, ոչ ոքի հետ չէի խոսում։ Ես ոչ ոքի հետ չէի խոսում։ Ես ոչ ոքի հետ չէի խոսում։ Ես ոչ ոքի հետ չէի խոսում։

Ես

Դիշերները առանց լապտերի պտըտցողները պիտի բռնվին.

Այս պատուէրին վրայ ոչինչ Մարգրիտը ուրախութենէն խելքը թռցուց՝ առջի օրը, ո-րովհետև իր երիկը իրիկուններուն անպատճառ Թաղին բոլոր պիճեատունները պտըտելու սովորութիւնն ըրած ըլլալով դիշերուան ժամը ե-ւրկրին հաղիւ տուն կը դառնար գլտորելով։

Երկ իրիկուն ըստ սովորականին՝ երիկը տուն դառնալուն պէս կնիկը դէմը ելաւ և ըսաւ.

— Այս իրիկուն վերջին իրիկունն է, ասկից վերջը կանուխ պիտի գաս այնպես չէ՞։

— Ինչո՞ւ համար։

— Անոր համար որ դիշերները առանց լապտերի պտըտողները պիտի բռնեն.

— Կնիկ, աղէկ որ ըսիր, վայը առաւ չուկայ երթալնիքէն լապտերը հետս տանիմ.

— Ձանըմ, ինչո՞ւ հետդ տանիս պիտի, տեսնողը ի՞նչ կըսէ, ամօթ չէ՞։ Չեմ տար լապտերը, պարապ տեղը իս պօռալ մի՛ տար։

— Աղէկ ըսիր կնիկ, ամօթ է. անանկ է նէ՛ անկողնիս Աբօսթօլին մէկ լամպէն ղրկէ՛, դիշերները հոն կը պառկիմ մինչև ցնոր կարգադրութիւն ըլաւ, Պապիկ աղբարը։

ՏԻՐ-ԽՄԲԱԳԻՐ ՅԱԿՈԲ Ց. ՊԱՐՈՆԵԱՆ

Ա. · ԾԱՆՈՒՑՈՒՄ

Թատրոնի բաժանորդներէն ոմանք չատ անդամներ գանգատած ըլլալով թէ թերթերնին երբեմն ուշ կառնան և երբեմն բնաւ չեն ընդունիր, որպէսզի նոյս գանգատներուս նորէն տեղի չտալու համար, տամահներ բաժնել մեր բաժանորդաց, որպէս զի այդ տամահներէն ոտն լրագրավաճառներուն և փոխարէն թատրոն առնեն։ Այս եղանակաւ տարակոյս չկայ որ մեր բաժանորդները թէ՛ կանոնաւոր և թէ՛ կանոնաւոր կերպով պիտի կրնան ստանալ իրենց թերթերնին։

———

Բ.

Դարձեալ մեր բաժանորդներէն ոմանք պիտոյտութիւն ըրած ըլլալով թէ՝ Թատրոնի մէկ թուղթն 30 բառ պիտի (իմմաղրամ) և 104 թուղթն 4 մէճիտիէ բաժանորդագին դնելուն մէջ տարաձայնութիւն կայ, և մեզ ալ անկարելի ըլլալով բաժանորդագինը զեղչել, որոշեցինք պարտնաւճառիին լրացած բաժանորդաց թերթ դրկելը դադրեցնելով իրենցմէ որ բարեհաճին ճեռք առնել մինչև որ պրտաց վճարը կարգադրուի և մենք ալ կրկրագ ըլլանք պահպանելիչ անօրինութիւն մը ընել։

———

Գ.

Ս · Մխայէլեան Տղայանը՝ որ կը տպուի Թատրոնը, Մնա—Նոր խան՝ դանձոյը՝ թիւ 10 սենեակը փոխադրված ըլլալով, մեր դրասենեակն ալ նոյն տեղ թիւ 3 սենեակը փոխադրված է։

ԿԷՏԿԻ ԳԱԶԱՆ
ԵՐԿԱՏԱ-ՎԱՐԺԱՐԱՆ ՍՈՒՐԻՆԵԱՆ
ՅԵՐԿԱՏԱՑ ՆԻ ԴԻՇԵՐՕԹԻԿ

Ըստ գաղղիերէնի խառնցութիւնը պատառորիկ է

Պ · Ա · Ս · Սարգիսեան կը ծանուցանէ Յարգոյ ուսումնակիցը Ա.պդալոյ թէ ինքը Ա.պդալին վարժարանաց մէջ բազում տարիներ յաջողութեամբ դասատուութեան ու անօրինութեան պաշտօններ վարելէ և Եւրոպացւոց դասախարակութեան նպատակն ու արդիւնաւոր կերպերուն հմտութիւն ստանալէ յետոյ, այս անգամ Կիւղի Բաշայի մեծ փողոցին վրայ թիւ 115 ընդարձակ տունը Երկաթ Դիշերօթիկ վարժարանի վերածած է սկսեալ ի 1 Հոկտեմբերի 1876։

Ս.յս վարժարանին մէջ այժմ յիսունի չափ տղաքերք և աշակերտուհիք կան. երեք ու կէս տարեկանէն մինչ տասն և հինգ տասեկան տղայ և աղջիկներ կընդունուին։ Փորր մանկանց դասախարակութեան կերպը հաճոյ, զուարճալի, արդիւնաւոր և բարոյական հիմունքներու վրայ հաստատուած է. դրացնելու և մտքերնին սրելու համար յատուկ խաղալիքներ առնուած են, իրենց մայրութեան, տատղամութեան և այլ պիտոյից անթերի վարժ և խնամք կը տարուին։ Ուսուցիչներն մանուկները թէ մանչ և թէ աղջիկ (մանաւանդ մանչերը) պատասխանելու են վարժարանին մէջ գաղղիերէն խօսելու. տակաւին դասերն ընդհանրապէս Հայերէն լեզուով կատարուին։

Ուսմունքներն են. Հայերէն, Գաղղիերէն, Անգղիերէն և Տաճկերէն լեզուք. Թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, տօմարաբանութիւն, իմաստասիրութիւն և իր պատմութիւնը, Աղգային և ընդհանուր պատմ. բնագիտութիւն, քրիստոնէական ուսումն՝ բուն դաւանութեան Հայաստանեայց ըստ առաքելական Ս. Եկեղեցւոյ, եւրոպական նօթա. գծագրութիւն, գեղագրութիւն, վարժութիւն գաղղիախոսակցութեան, աշխարհագրութիւն. բնութ. աղջկանց համար ասղնեգործ. կար, ձեւելու և ծալքի չինելու արուեստ։

Ս.յս ուսումներէն մէկ կամ քանի մը հատ սովրիլ ուզողներն ալ կընդունուին. ձեւելու ու ծալքի չինելու արուեստներուն ու բնութ. համար եկող Տիկնոջ և օրիորդ իրենց վարժարանը գոհացնելու յարմար ու պատրաստ պիտի գտնեն այն վարժարանը։

Դիշերօթիկները ընտանեկան կենաց քաղցրութենէն զուրկ չեն. իրենց համար տարեւոյ թնտանքն ու բարոյական հսկողութիւնը կրնան թէ՛ գաւառացի և թէ՛ Պօլսեցի պատասխանատուներ ձեռնհաս մեն վստահութիւն ազդել զաւակներն այն բարեկարգ վարժարանը դրկելու, ուր որ վեց ամսոյ միջոցի մէջ յառաջադէմ աշակերտ չատ ուշիմ արդիւնք գտած են քան սլսլը, և մէջերնին կան որ գաղղիերէնն խոսակցութիւն հասկնալու բատական վարժ և նոյն լեզուով իրենց գաղափարներն յայտնելու մտքը ի չատ կարող եղած են։

Վարժարանիս ամանց մէջտեղ հեռաւորութիւն է մայրաքաղաքիս Կայսերական Լիսէի մէջտեղին և իր ամանց վերջին տարին մէկ Լիսէին վեցերորդ տարուդ կը հասնի։

Աստի թէ՛ Կիւղի Բաշայի թէ՛ շրջակայ ուրեք հեռաւոր թաղերու և թէ գաւառաց աշակերտք և աշակերտուհիք կը դնան իրան օգուտ քաղել սոյն կարևոր հաստատութենէն։

Վճարմանք կանխիկ են և եամանեայ հեռևեալ դիներով,

Փոքրիկ մանկանց համար ամսեթոշակ 4 ոսկ. մէճիտ, Ուսումնարան մնողներու համար 2 մէճիտ,

Բիանոյի համար վարժարանիս աշակերտները 2 1/2 մէճիտ զատ վճարելու են, իսկ մնացն բնակ նաև առնելու եկողները 3 մէճիտ։

Ծալքի չինել և ձեւ տալելու եկողներն յատուկ սահմանութեամբ կընդունուին։

Յերեկոյ ճաշը վարժարանին ընելու համար 3 մէճիտ զատ վճարել պէտք է։

Դիշերօթիկներու եամանեայն 8 Օսմ. լիրա է։

Ընդարձակ տեղեկութեանց համար վարժարանը դիմելու է։

77 Մարտ 14 Սարկնեան վարժարան

———

ԳՐԱՏՈՒՆ ՊԵՌԵԱՆՑ
ԵՒ·ԵՒ ՓՈԼԸԸՄ ԹԻ· 22

Նոր բացված սոյն դրատան մէջ կը ծախվին չափաւոր գնով դիատետրեանց վերաբերեալ ինչպէս նաև ուրիշ այլ և այլ Ճառանութիւն դիրքեր։

Ցիշեալ դրատան մէջ մօտ օրէն պիտի ծախվին նաև Հայերէն ամեն նոր հրատարակութիւնք, գասագրքեր են, Բերայի և Գալաթիայիպողոսոյ ի դիւրութիւն։

Ծախու դիրք ունեցող աղգայինք ալ կընան դիմել յիշեալ դրատունը, որ դիրք ալ ծախու կառնէ։

———

ԴԵՂԱՐԱՆ
ՏԻԳՐԱՆ ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ

Իր արհեստին մէջ փորձառական հմտութենէն զատ դեղագործական ախլորմով վիպազբեալ դեղատոմսի Տիգրան էֆէնտի Ալլահվերտեան, պատիւ ունի ծանուցանել որ Գահէն Բաբայի կոմսը Շէմս-իւլ-Իսլամ խանի կից իր դեղարանը պատրաստ է Տաճկերէն Ֆրանսերէն ու ամեն լեզուաւ դեղատիրներ քննդունիլ ու յանախարդներն թէ դեղօրէից և թէ դնայն կոմանել գոհ ը՛նել։

Յիշեալ դեղարանը կը գտնուի ամեն օր ժամը 4 էն մինչև 10 մայրաքաղաքիս երեւելի բժիշկներուը ինչպէս նաև ամեն երեքշաբթի և ուրբաթ օրերը Յէն մինչև 8 կարտաէլոյ ձրի նայելու համար յատուկ ըստ ժէշխիներ. բաց ի սոսնդմէ ամեն տասնեհինգ օրը անդամ մը, երկուշաբթի օրերը, աչքի և ականջի հիւանդութեանց բժիշկ մը ներկայ պիտի գտնվի կարտաէլոյ ձրի նայելու համար։

———

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՓՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս · ԵԿԵՂԵՑԻՈՅ

Բրիստոնէական ուսման դեղեցիկ պատգիրքը մէջ ղը ազգային բոլ մտաճնադիր և Հայաստանեայց եկեղեցւոյ բանիրան վարդապետ Ա.բժ. Գարեգին Սրուանձտեանց կը նուիրէ ազգային մանկտւայն։

Ա.բժ. Հեղինակը։ ինչպէս կրսէ իւր յառաջաբանին մէջ, փոխանակ զատ մը մանր մունր ուսմունք գետեղելու Բրիստոնէականին մէջ. պտպմէ մանուկ ուսանողն երբէք բան մը չհասկնար, չորս մասերու բաժնած է իր գրատիրքը հետեւեալ կերպով։

Մասն Ա. Հմմունք Հաւատոյ։ Մասն Բ. Հին կտակարան։ Մասն Գ. Նոր կտակարան։ Մասն Դ. Տարբեր Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան։

Ա.բժ. Հեղինակը մանկական բարոյականի պատկանելու գատ մ'ալ պրած է ի վիճակն գրքուկին։

Կը գտնուի Եէնի—Ճամի Զիլինկիրլեր ճատասխ թիւ 2, Ս · Ղ · և Եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գինն է 25 սանթիմ։

Գպրոցաց համար և մեծ քանակութեամբ առնուած ատեն 100ին 10ը զեղչ կըլլայ։

———

ՇՈՒՀԱՆ Ի ՍԻՊԻՐ
ԿԱՄ
ԳՈՂԹՈՒԿԱՆ ՀՈՑԸ
Գ Ր Ի Ց

Ց· Տէր Յարութեանց

Սոյն վիպատանութիւնը՝ որ Հայաստանի քաղաքներն ու սովորութիւնները նկարագրելով հանդերձ գպիծականութեան ճաշակները կը սլսկսի, այնպիսի ճոխ ոճով կերպով հիւսված է որ հեղինակին մեծ պատիւ կը բերէ։

Սոյն ընտիր գիրքը պրէնը սպառելու մօտ ըլլալով մեր կողմէն ոչ է պահեստ ուրիշը կը հանձնենք, մնաստանդ որ բանասիրներն սրպէն իր ֆայտերէքը հաստատութեան ծանօթացած ըլլալով յանձնարարութեան բնաւ պէտք չունի։

———

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՕ
ԻՄ ԳԷՌ ԿԱՒԼՈՒԱ

Թարգմանեց Ե.ղիազար Ե.ղիազարեան

Գործոս մեծահանճար բանաստեղծին անզուգական գրչէն ելած խրատական և սրատաչափ վէպ մը, որ մեր սրտի երիտասարդ հանճարներուն գրեթէ նըմանելէն կ՝ զգեցիկ հայերէն աշխարհաբառ լեզուի վերածուած՝ այնպիսի կանոնաւոր և կոկիկ գրչով մը՝ որ պատիւ կը բերէ երիտասարդ թարգմանչին։

Կը ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիրլեր ճատասխ թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Գինն 3 գրշ.

———

ՍՋՈ

Ազգային երիտասարդ մը, որ իւր վաւերացեալ հեղինակութիւններով տաճկերէն լեզուի մէջ համբաւաւոր եղած է, այս անգամ կը խոստանայ թէ՛ Ազգային վարժարանաց մէջ և թէ մասնաւորաց դասախօսութիւն ընել տաճկերէն լեզուն քիչ տաճնի մէջ ուսուցանելու պայմանաւ։

Նաև կը խոստանայ քիչ տաճնի՝ մէջ պարտիզերնը կատարելապէս ուսուցանել։

Պէտք ունեցողը դիմելու է լրագրոյս տպարանը։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս · ՄԻՒՍԱՃԼԵԱՆ

Քհյ Նոր խան վերի յարկ մինգատուռ

Թիւ 10